

ԳՐԻԳՈՐ - ՎԱՀԱՆ

ՄԱՍՆԱՃԻՒՂ ՄԸ

(ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱԽՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ)

Ցաղացափուած ժողով մէկ արար

Ցպագրութիւն ՊԱՀԾՈՒ ԵՂԲԱՐՑ

Փ. Ա. Ր. Դ.

1936

891.99
Գ-89

01 JAN 2009

891.99

Գ-89

ԳՐԻԳՈՐ - ՎԱՀԱՆ

ՄԱՍՆԱՃԻՒՂ ՄԸ

(ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ)

Տաղաճափուած ժողով մէկ արար

ՀՀ-81875

Տպագրութիւն ՊԱՀՐԻ ԵՂԲԱՐՑ

ՓԱՐԻԶ

1936

25.03.2013

26068

ՅԱՐԻԿԱԴՐԱՆ
(ՄԻԳԱԿԱ ՊԱՍՏՈՐԱ ՀԱՐՄԱՆՔՈՒԹՅՈՒՆ)

Առաջին իրավ Շահնշահրան



37819-64



ՊՕՊՈՍ ՆՈԽՊԱՐ ՓԱՇԱ
Հ. Բ. Բ. Միութեան հիմնադիր-քարերարը

որուն կը ձօնէմ զբքոյկս
երբ յարդանք իր անման յիշատակին:
Գ. Վ.

57604-4.4.

ՓՈԽԱՆ ՅԱՌԱԶԱԲԱՆԻ

ՈԵՒՅ մարդ, քաղաքացիական իրաւունքով, ազատ է հետեւելու իր նախաս-
սիրած այս կամ այն զաղափարին, իր հայեացքներուն համաձայն:

Բայց ոեւչ գիտակից մարդ, ամէն բանէ առաջ պարտաւոր է հետեւիլ այն
ճամբուն, որ կը տանի իր պատկանած աղքին և հայրենիքին գերազոյն շա-
հերուն:

Դժբաղգարար, մենք հայերս, աղքային շահերը մեզի գերազոյն նպատակ
ընելէ աւելի, կուսակցական ոգիով կը մօտենանք ամէն բանի, եւ կը պատահի
որ չառ անդամ կուսակցութեան համար կը գործենք, կտրօրէն, զոհելով հայ
ժողովուրդին բարիքն ու օգուար յիմար եւ յամառ կիրքերու:

Այդ պատճառաւ մեծ յարգանքի արժանի են այն հազուազիւտ հայեր որ,
Միութեան իտէալովը տոգորուած, աղքին յառաջդիմութեան սատարող ձեռ-
նարկներու կ'օժանդակեն, անխարական ողիով մը:

Այս յանդաւոր գրքոյկովս, զուարթ ձեւի մը տակ, փորձած եմ ցոյց տալու
հայ իրականութիւնը, այլազան կարծիքներու և հակընդդէմ սկզբունքներու
կոռւազաշտ զարձած, ուր կամակր եւ չահաղէտ մարդիկ ողի ի բոխն կը
ջանան խանգարել եւ նոյն խոկ քայլայել հայ աղքին եւ հայ հայրենիքին բար-
ոյն նուիրուած այն մեծ եւ գեղեցիկ կաղմակերպութիւնը որ կը կոչուի «Հայ-
կական Բարեգործական Ընդհանուր Միութիւն»:

Իբրեւ պատասխան անոնց, որ բան գործ ըրած են քննադատել այս համազ-
դային Միութիւնը, իր երեսնամեակին ասթիւ կը հրատարակեմ այս գրքոյիս,
որուն մէջ ոչ մէկ հոսանքէ տարուող և միայն աղքին բարիքը ցանկացող հայուն
դատողութիւնը փորձած եմ պատկերացնել, դատողութիւն մը որ հպարտ եմ
յայտարարելու թէ նաեւ իմս է:

Փարիզ, 22 Փետր. 1936

ԳՐԻԳՈՐ-ՎԱՀԱՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԱՂԱՔ	Ազգասէր հայ մը
ՏԵՐ ՂԵՒՈՆԴ	Քահանայ
ՄԻՍԱԿ	Դաշնակցական
ՀՆԱԶԱՆԴ	Դաշնակցական
ԱՐՇԱԿ	Ռամկավար
ԿԱՅԾԱԿ	Հնչակեան
ՄԱՍԻՍ	Հօկեան
ՀԱՄԲԱԿ	Զօրավար
ՏՐԴԱՏ	Սերաստիոյ հայրենակցական
ՄԻՄՈՆ	Մալաքիոյ հայրենակցական
ՈՐԲՈՒՆԻ	Չափահաս որբ
ՆՈՒՆԿ	«Զարկ» թերթի թղթակից
ԶԵԶՈՒՔ	Ազգային մը

Տեսարանը կը ներկայացնէ ժողովարահ մը : Մէջտեղը կանանչ ծածկոցով
խոշոր սեղան մը : Բոլորտիքը արռողներ : Խորթը՝ դուռ :
Թուականը՝ 1935 : Վայր՝ հայկական գաղութ մը :



ՄԱՍՆԱՀԻՒՂ ՄԸ

(ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ)

(Վարագոյրը բարձրացած պահուն Մաղաք, առանձին, նստած է մէջտեղը,
թուղթերու առջեւ, որոնց մէջ թաղուած կ'աշխատի : Քիչ յետոյ, ողեւորուե-
լով կը սկսի կարդալ) :

ՄԱՂԱՔ

Այո՛, սիրելի հայրենակիցներ, օրերը հասան,
Հերի՛ֆ որ նստինք, ա՛լ տանի մեր ազգին վերքին բալասան,
Պինդ իրար փարինք, կապուած չըլանք քո՛յի կամ բարակ թելի,
Պողպատեայ կամքով կազմենիք մարմին մը անպառակտելի...

(Այս միջոցին կը ժանեն Միսակ եւ Հնազանդ ու կը հետեւին ճառին, զոր
Մաղաք կը շարունակէ կարդալ) .

Հերի՛ֆ եղանիք զոհ կուսակցական սին գաղափարներու,
Ա՛լ հասուածական ոխ, ատելուրիսն վանենիք մենիք հեռու,
Դաշնակցական, Զօկ, Ռամկավար, Հնչակ, եկած քով քովի,
Նուիրուինք զործին, համակ հաւատովով, ուժով, կորովի,
Բարեգործական նիւղ մը հիմնենիք հոս, փառքն այս քաղաքին...

ՄԻՍԱԿ

Արդեօֆ հարցում մը կրնա՞նիք ուղղել մենիք պարոն Մաղաքին :

ՄԱՂԱՔ

(Անդրադառնալով որ առանձին չէ)

Վա՛յ դո՞ւմ էֆ... բարե՛ւ, տիկին Հնազանդ եւ պարոն Միսակ...

ՄԻՍԱԿ

Կը տեսնեմ որ ձեր փորձած հառը դուք սըլսալ ըսկըսաք...

ՄԱՂԱՔ

Ի՞նչպէս թէ սըխալ...

ՀՆԱԶԱՆԴ

Ահա՝ լսնդրում եմ ձեզ, պարոն Մաղաք'ք,
Որ կուսակցութեանս անունը յարգէք, իր հետ չի լսադաք...

ՄԱՂԱՔ

Բայց դեռ չէք լըսած նառս ամբողջովին. այդ վերջին մասն էր...

ՄԻՍԱԿ

Եւ հոդ իսկ արդէն Թաշնակ անունին լուսանիք կը հասնէր:

ՄԱՂԱՔ

Ի՞նչպէս թէ լուսանիք...

ՀՆԱԶԱՆԴ

Խնդրում եմ, պարոն, սրբագրել ձեր նառ...

ՄԻՍԱԿ

Առաջ բողոքի...

ՄԱՂԱՔ

Բայց սրբագրելու չեմ տեսներ պատճառ...

ՀՆԱԶԱՆԴ

Խնդրում եմ կարդալ ձեր նառի վերջին տողերը երեք...

ՄԻՍԱԿ

Եւ տեսէ՛ք թէ հոն ի՞նչ մեծ նախատինք մեզի կը թերէք:

ՄԱՂԱՔ

Ո՛չ մէկ անարգանիք...

ՀՆԱԶԱՆԴ

Խնդրում եմ կարդալ...

ՄԻՍԱԿ

Սրբագրե՛լ փութով...

ՀՆԱԶԱՆԴ

Եւ չարտասանե՛լ Թաշնակ անունը ձեր լեզուաւ քոթով:

ՄԱՂԱՔ

Սրբագրե՛մ, բայց ի՞նչ... ո՞րն է սըխալը, չեմ գիտեր, իրօ՛ք...

ՀՆԱԶԱՆԴ

Որպէս մի ոչինչ արտասանում էք «Թաշնակցակա՛ն, Հօ՛կ»...

ՄԻՍԱԿ

Միքէ չէ՞ք գիտեր որ Հօկ դնել ֆովն այդ սուրբ անունին,
Նախատինք մէկ որ ընկերները մեր պիտի չընդունին:

ՀՆԱԶԱՆԴ

Հօկի խօսքը պիդ մեր անուան կողքից շպրտեցէ՛ք դէն...

ՄԱՂԱՔ

Եթէ այդ է լոկ՝ կը փոխեմ ահա...

(Կը նստի եւ թուղթին վրայ կը սրբագրէ)

ՄԻՍԱԿ

Մենի գոհ ենի արդէն:

ՀՆԱԶԱՆԴ

Իսկ արդ խնդրում եմ որ կարդաք, պարոն, սրբագրածը ձեր...

ՄԻՍԱԿ

Անապարեցէ՛ք, ի՞նչ քուղը բոնած ապուշ էք դարձեր:

ՄԱՂԱՔ

(Կը կարդայ)

«Թաշնակ, Ռամկավար, Հնչակեան եւ Հօկ»...

ՄԻՍԱԿ

Խնդրեմ, առէք կա՛նգ,

կը կրկնեմ, պարոն, Թաշնակ անունին ունեցէք յարգանիք:

ՄԱՂԱՔ

Սակայն... վերջապէս...

ՀՆԱԶԱՆԴ

(Հեղնանքով)

Թաշնակ... Ռամկավար...»

ՄԻՍԱԿ

Կ'երեւի որ դուք
իոր ատելութիւն կը սընուցանէք մեզի դէմ յատուկ...

ՀՆԱԶԱՆԴ

Սրբագրեցէք որ Թաշնակցութիւնը որպէս մի հոգի՝
Ոտքի չի կանգնի, բարձրացրած իր գոռ ձայնը բողոքի:

— 10 —

ՄԱՍԻՄ

(Քիչ առաջ մտած է ներս եւ լսած վերջին քանի մը խօսքերը)

Այդ ի՞նչ է, հիմա ըսել պիտի տաք... այլեւս վազ անցէֆ,
Զեր ծիծաղելի բողոքներովը կը չափազանցէֆ:

ՄԻՍԱԿ

Ո՞վ էֆ որ կ'ուզէֆ արդար բողոքի գոռ ձայնը մարել...

ՄԱՂԱՔ

(Հանդարտեցնելով)

Տիկնա՛յֆ, պարոնա՛յֆ, վէճը հանեցէֆ փակուած համարել:

ՄԱՍԻՄ

Ո՞վ եմ մի... չիյտէ՞ֆ... ես՝ հարուածային Հօկեան ժիր ընկեր,
Ի՞նչ երկութք մէկ այս ազնիւ մարդուն վըրան էֆ ինկեր...

ՀՆԱԶԱՆԴ

Օ՛ դուք քշնամի՛ մեր ասպետական ժայլերուն արի...

ՄԻՍԱԿ

Թքշնամին ընդմիշտ մեր ոտքերուն տակ պէտք է խոնարի:

ՄԱՍԻՄ

(Յարձակելով)

Ի՞նչ կը փախչիս կոր...

ՄԻՍԱԿ

Կը զգեստնեմ ժեզի...

ՀՆԱԶԱՆԴ

Գլխին տո՛ւր, Միսա՛կ...

(Դրան մէջ կ'երեւին Տէր Ղեւոնդ եւ Արշակ)

ՄԱՂԱՔ

Օ՛ Տէր հա՛յր եւ դուք պարոն Արշակ, նի՛շտ ատենին հասաք:

Տէր Ղեւոնդ

(Մասիսի եւ Միսակի մէջ մտնելով)

Որդեա՛լի, ամօ՛ք է... Մեղա՛յ ժեզ Աստուած, կատարէ՛ բարին:

ՄԻՍԱԿ

Թոռ'դ լըռել գիտնան երբ չեն զգար որ սըլսալ ժայլ առին:

Տէր Ղեւոնդ

Օրհնա՛ծ, հանդարակ...

ՄԱՍԻՄ

Դուք Հայաստանի քշնամի որդե՛ք...

ՄԻՍԱԿ

Դաւանան մըն է... ի՞նչպէս այս տեսակ մարդը չես մորքեր:

ԱՐՇԱԿ

Շատ հըրաշալի, սուրբ գործի մ'համար հաւաքուած հոս ենի,
Գիք այստեղ պէտք չէ որ մենի իրարու սիրտերն ակօսենի.
Պէտք չէ որ ըլլանի իրարու հանդէպ դեռ ֆինախնդիր,
Այլ ընդառաջնեն Միութեան կազմին, ոգուվ մը ընտիր...

ՄԱՂԱՔ

Տէր հայր, կը խնդրեմ, սեղանին մէջանդ նստեցէֆ նախ դուք:

ՄԻՍԱԿ

Ժողովը բացէ՛ֆ, ըսպասելն այստեղ մեզ կուտայ տաղտուկ:

Տէր Ղեւոնդ

(Կը նստի)

Դուք, պարոն Միսակ, իմին քովըս սանկ նստեցէֆ, խնդրեմ:

ՄԻՍԱԿ

(Կը նստի Տէր Ղեւոնդի աջ կողմը)

Տիկին Հընազանդ, եկէ՛ֆ, ձեզի քովս ունենալ կ'ընտրեմ:

ՀՆԱԶԱՆԴ

(Նստելով Միսակի աջ կողմը)

Անշո՛ւտ, չէ՞ որ մենի պատնէշում ձեզ հետ կանգնած ենի արի,
Պատրաստ՝ լըծուելու գաղափարական ուժեղ պայքարի:

Տէր Ղեւոնդ

Տիկին Հընազանդ, այստեղ եկած չենի մըղելու պայքար,
Այլ հիմնարկելու Միութեան նիւղ մը ազգիս օգուակար:

ՄԻՍԱԿ

Ժողովէն առաջ երկու խօսք կ'ուզեմ...

ՄԱՍԻՄ

Ո՛չ կը բողոքեմ,
Ոտքնագութեան քոյլ չեմ տար երբեք, բանի որ Հօկ եմ:

(Ոտքի ելած են, կոռելու պատրաստ)

ԱՐԴԱԿ

Նստեցէ՛մ, լսնդրեմ, հարկ չըկայ երբեք վէճի, կըոխի...

(աթոռ մը քաշելով եւ նստելով սեղանին ծայրը)

ՄԱՍԻՄ

Կարծեմ փորձանմի հանդիպին պիտի... այնպէս կ'երեւի:

(Ամէնքը կը նստին: Տէր զեւոնդի ձախը՝ Մաղաք եւ Արշակ)

ՄԻՍԱԿ

Հիմա ձայն կ'ուզեմ...

ՄԱՍԻՄ

Ո՛չ, առաջ դիւան...

ՄԻՍԱԿ

Նա՛խ ձայն, կը պնդեմ:

ՏԵՐ ՂԵՒՌՆԴ

(Մասիսին)

Երկու խօսք միայն քող ընէ, լսնդրեմ, մի՛ կենաք ընդդէմ:

ՀՆԱԶԱՆԴ

Հանրային խօսքին արգելվ է դնում... բռնութիւն է դա:

ՄԱՂԱՔ

Թոյլ տուէ՛մ, լսնդրեմ... Արշակ, վըրայ տո՛ւր, ըստ քող թոյլ տայ:

ՄԻՍԱԿ

(Հանդիսաւոր)

Նիստը բանալէ առաջ եւ նախ քան դիւանը կարգել,
կը կրկնեմ որ հոս Դաշնակցութիւնը պէտք չէ անարգել.
Անհըրաժեշտ է յարգանենով միայն խօսիլ անոր շուրջ,
Եւ իւրաքանչիւր բառ ըստած պահուն ըլլալ աշալուրջ:

(Կը նստի)

ՄԱՍԻՄ

Կը պահանջեմ որ յարգանմ ընծայուի Հօկի անունին:

ԱՐԴԱԿ

Անարգական խօսք Շամկավաներն ալ պիտի չընդունին:

ՄԱՂԱՔ

Անշուշտ, եւ երէ ներկաներն իրօֆ նիստը կը յարգեն,
Երբեք պէտք չէ որ շեղին կարեւոր մեր օրակարգին:

ՀՆԱԶԱՆԴ

Նիստը բա՛ց արէֆ:

ՄԱՍԻՄ

Դիւանը ընտրենի:

ԱՐԴԱԿ

Դիւան, արդարեւ...

ԿԱՅԾԱԿ

(Ներս կը մտնէ)

Սոցիալ-Դեմոկրատ, Հնչակ շարքերուն կայծակն եմ: Բարեւ:

ՄԱՂԱՔ

Օ՛, հըրամմեցէ՛մ, նստեցէ՛մ, լսնդրեմ, Արշակին քովը:

ԿԱՅԾԱԿ

(Նստելով ցոյց արուած սեղը)

Նայինք քէ ի՞նչպէս պիտի համոզէֆ մեզ ձեր խելքովը,
Թէ առանց տալու մեր կուսակցութեան դեկ ու բանալի
Միութիւնը դուք վարէֆ որպէս զի դրամը չի հալի:

ԱՐԴԱԿ

Նախ դիւան ընտրենի, յետոյ կը խօսինք, պարո՞ն, այդ մասին...

ՈՐԲՈՒԻՆԻ

(Ներս կը մտնէ)

Չափահաս որք եմ, Որքութի: Այստեղ ժողով կայ ըսին,
Եկայ որ ես ալ մասնակից ըլլամ... արդեօֆ կ'ընդունի՞օֆ:

ՆՈՒՆԻԿ

(Ներս կը մտնէ)

«Զարկ» օրաքարտի քդրակցուին եմ, անունս է Նունիկ,
Զիս ալ մասնակից ընել կը հանիֆ, կը սիրեմ յուսալ...

ՏՐԴԱՑ

(Ներս կը մտնէ)

Բարե՛ւ, Սերաստիոյ Վերաշնացէն Տրդատն եմ ես ալ...

ՄԻՄՈՆ

(Ներս կը մտնէ)

Ես Սիմոնիկն եմ, մեր նոր Մալաքիոյ հիմնադիր անդամ...

ՄԱՂԱՔ

Ընտրութեան համար միտքերը ինչո՞ւ յուզել ու խառնել,
Քանի որ մեր մէջ Տէր Հայրը ունինք՝ ես կը ցանկայի
Որ իրեն տրուէր դերը վարիչի կամ նախագահի:

ԶԵԶՈՒՔ

Այո՛, յարմար է...

ՄԻՄՈՆ

Ես զինքը կ'ընտրեմ...

ՏՐԴԱՏ

Ես ալ կ'ընդունիմ...

ՄԻՄԱԿ

Մեր ալ շարժերուն կողմէ այդ ձեւին ըսելիք չունիմ:

ԿԱՅԾԱԿ

Հնչակեաններս ալ կ'ընտրենք Տէր Հայրը առանց բողոքի...

ՄԱՍԻՆ

Կ'ընդունինք զինքը, մենք, հարուածային շարժերս ալ Հօկի:

ՆՈՒՆԻԿ

«Զարկ» օրաբերքի որպէս քդրակից համաձայն եմ ես:

ՀՆԱԶԱՆԴ

Դէ՛, ուրեմն շուտ նիստը բա՛ց արէք...

ՄԻՄԱԿ

Մի սպասցնէք մեզ:

ԶԵԶՈՒՔ

(ՄԵԿՈՒՍԻ)

Փա՛ռք ժեզ Ասուած որ այս քայլը առին համերաշխօրէն,
Եւ արիւնալի կոիւ մը չելաւ այս մեծ ժըխորէն:

Տէ՛Ր ՂԵՒՈՆԴ

Նիստը բանալէ առաջ ես կ'օրինեմ պարոն Մաղաքը,
Որ ըմբռնած թէ ազգին փրկութեան նշգրիտ աղազը
Բարեգործական Միութեան կողմէ ցոյց տրուած ջանին է՝
Կանչած է մեզ հոս որ մասնաճիւղ մը տեղուոյս մէջ կանգնէ:
Զաւակնե՛րս, հիմա իր հրաւաէրին ընդառաջ երթանիք,
Բարեգործական Միութեան կազմին մեր բաժինը տանիք,

37819-64

Այս վեհ Միութեան, մեծ հիմնադրութիւն Պօղոս Փաշայի,
Ազգիս Միութեան՝ որ այնիքան որքի կեանելը կը շահի...
Մատարե՛նիք, չէ՞ որ մեր մէջ բարիքի հունոր կը ցանէ,
Չէ՞ որ երկրին մէջ շէնիքեր, աւաններ կը կառուցանէ,
Չէ՞ որ կը բաշխէ մըտային սրնունդ նոր սերունդներու,
Չէ՞ որ հայ ազգին ամէն դժբաղդ բան կը վանէ հեռու:
Զաւակնե՛րս, հիմա անոր կողքին դուք կանգնեցէք արի,
Երէ կ'ուզէք որ ազգին նկատմամբ գործ մ'ընէք բարի:
Հիմա կրնաք դուք խօսի ուզել զատ զատ եւ խօսիլ կարգաւ:

ԱՐՇԱԿ

Քարտուղար պէտք է:

ՄԱՍԻՆ

Այո՛, քարտուղա՛ր:

ՆՈՒՆԻԿ

Քարտուղա՛ր, հարկա՛ւ:

ՀՆԱԶԱՆԴ

Առաջարկում եմ Միսակը կարգել:

Տէ՛Ր ՂԵՒՈՆԴ

Երէ կ'ընդունի:

ԿԱՅԾԱԿ

Ո՛չ, ո՛չ, Հնչակեան կուսակցութիւնը նունիկը ունի:

ՄԻՄԱԿ

Արդէն կը մերժեմ քարտուղարութեան պաշտօնը այսօր,
Որ ազատ ըլլամ եւ կարսդանամ փաստերով իլզօր՝
Վիճին ու յաղթել ի փառս պանձալի Դաշնակ անունին....

ԶԵԶՈՒՔ

(ՄԵԿՈՒՍԻ)

Կարծես թէ նիստ չէ՛, այլ իրարու դէմ պատերազմ ունին:

Տէ՛Ր ՂԵՒՈՆԴ

Աղէ՛կ, քող օրիորդ նունիկը ըլլայ, երէ կ'ընդունիք:

ԱՄԷՆՔԲ

Այո՛, քո՞ղ ըլլայ:



ԿԱՑՄԱԿ

(Նունիկին)

Շո՛ւտ, Տէր-պապային քով նստէ՛, Նունիկ :

(Նունիկ եւ Մաղաք իրարու հետ տեղ կը փոխեն : Նունիկ թուղթ եւ մա-
տիտ կը հանէ ու կը նստի :)

ԱՄԷՆՔԸ

(Մատ բարձրացնելով)

Զա՛յն կ'ուզեմ... ձա՛յն... ձա՛յն...

(Նունիկ կ'արձանագրէ)

Տէր ՂԵՒՈՆԴ

Հանդա՛րտ, զաւակնե՛րս... կը լսուինք կարգով :

ՆՈՒՆԻԿ

(Միսակին)

Արդ լսուի ձերն է :

ՄԻՍԱԿ

(Պաքի)

Տէր Հայր, այսօրուան մեր օրակարգով,
Բարեգործական Միութեան նիւղ մը իիմնել կը ցանկանք,
Ուրեմն պէտք է որ անկեղծօրէն բուն այդ հարցին գանիք :
Ես համաճայն չեմ, — երբ որ ես կ'ըսեմ՝ գիտուեք ազգն համակ, —
Վասրնզի գիտեմ որ Միութիւնն է լսիստ անընդունակ
Ազգին իսկապէս բարիք ընելու : Այս բանին վստահ՝
Անոր գոյութեան հակառակելու համար հոս նստայ :
Հայրենակիցնե՛ր, այն դէպէներէն վերջ որ հայր տարաւ,
Նոյն հայր այսօր ազատ ապրուսի ծարաւ է, ծարա՛ւ :
Մենիք, հայերս, այսօր հայրենիքի զուրկ, մընացինք կարօս,
Որովհետեւ մենիք չունինք թնդանօր, չունինք զէնիք, վառօս...
Միութիւնն այսօր վերածած հայուն գանձը թըրբսրի՝
Անհոգ անտարբեր այդ գանձին վըրայ ինչո՞ւ կը նստի,
Փոխանակ տալու լայն լայն միշոցներ կրուող շարժերուն,
Որ ոտքի կանգնին, զէնիքեր ի ձեռին, արիւնով եռուն,
Սըլանան յառաջ, յեղափոխական ուժեղ հարուածով,
Խըլեն երկիրը, Հայաստանն անկախ եւ ծովերէ ծով...
Միութիւն մը որ չըներ այդ, անուամբ ազգայի՛ն պանիքն,
Կը յուսա՞՞ դեռ որ անոր գոյութեան մարդիկ կը ցանկան :

(Կը նստի : Ամէնքը լուռ են եւ պաղ : Հնազանդ կը ծափահարէ :)

ՏէՐ ՂԵՒՈՆԴ

(Քննելով Նունիկի առջեւ գտնուող թուղթերը)

Արդ կը պատկանի ձայնը Մասիսի :

ՄԱՍԻՍ

(Պաքի եւ հրաշունչ)

Ընկերնե՛ր, այսօր

Մեր Հայաստանի խորհրդայնացման բազուկը հըզօր
Գիտենք քէ ի՛նչ մեծ հարուած մ'է դըրած ֆաշիզմի գանկին,
Որմէ մընացած կայծերը արդէն տակաւ կը հանգին...
Հո՛ն, խորհրդայնի Հայաստանի մէջ վերելքն է կեանիքի,
Բարեգործական լըծուած է այնտեղ մեծ աշխատանիքի,
Ու կը ջանայ որ կեանիքն օր ըստ օրէ այնտեղ ըլլայ շէն,
Կը հիմնէ դպրոց, մայրանց, կայան եւ նուպարաշէն...
Այսպէս մեր երկրի վերաշինութեան թէեւ ան կ'օգնէ,
Բայց բուն սատարը վերաշինութեան ինք չէ, այլ Հօկն է :
Ուստի գովելով հանդերձ Միութեան շինարար ոգին,
Ես կը ցանկամ որ Բարեգործական միանայ Հօկին,
Որ Հօկն աւելի ծաւալ լստանայ, գործէ եռանդուն,
Ըստախանովին բազուկով շինէ գիւղեր, աւան, տուն :
Եւ քանի որ հոս Հօկն ունի նիւղ մը, ինչո՞ւ անոր կից
Հաստատել ուրիշ նոյնանըպատակ նիւղ մը մրցակից,
Ի՞նչ հարկ ստեղծել երկու հանապար նոյն գաղափարին,
Բարեգործականն եւ ուրիշ շարժեր քո՞յ Հօկին փարին :

(Կը նստի)

ՆՈՒՆԻԿ

Լսուելու կարգը հիմա ձեզ եկաւ, Զօրավար Համբակ :

ԶՕՐԱՎԱՐ ՀԱՄԲԱԿ

(Պաքի)

Այս մեծ Միութեան զեկը պէտք չէ տալ մարդերու բամպակ :
Եւ ահաւասիկ ամէնքուր առաջք կ'ըսեմ ես նորէն՝
Բանալին ինծի պէտք է տալ եւ զիս ընտրել տընօրէն :
(Կը նստի : Կայծակ միս-մինակը կը ծափահարէ :)

ՆՈՒՆԻԿ

Լսուի ձերն է այժմ :

ՈՐԲՈՒԻՆԻ

Ես որք եմ, ուստի կենդանի վըկան,

Թէ ի՛նչ օգտակար Միութիւն մըն է Բարեգործական :

Կարճ կ'ըսեմ. — Անո՞ր կը պարտին ինձ պէս կեանքն իրենց շատեր,
Ասկէ աւելի կարկառուն փաստ մը, բսէ՛ ինձ, կա՞յ դեռ...

ՏԵՐ ԴԵՒՌՆԴ

Միութեան կազմին համաձայն ենի հոս ամենին ալ հարկաւ,
Ուստի աւելորդ կը նկատեն ես խօսիլը կարգաւ,
Եւ անմիջապէս խօսքը կը յանձնեմ պարոն Մաղաֆի:

ԿԱՅԾԱԿ

Զէ՛, չէ՛, ամէն մարդ իր կարգին խօսիլ հոս կը փափաքի,
Որ կարողանայ Միութեան սըխալ գործերը քուել...

ՀՆԱԶԱՆԴ

Եւ ըսել քէ ան ազգին ուեւէ օգուտ չի տուել:

ԶՈՐԱՎԱՐ ՀԱՄԲԱԿ

Նոյնիսկ չէ բացած ձերի նաշշարան որ բաշխէ ապուր,
Որ հայ արժանի դէմքերուն փորը չի մընայ քափուր...

ՄԱՂԱՔ

Աղքատախընամ ընկերութիւն չէ Բարեգործական,
Իր իտէալին մէջ աւելի՛ բարձրը, մե՛ծ ձրգուումներ կան.
Ուստի հարց տանիք քէ Բարեգործական Միութիւնն ի՞նչ է,
Օգտակա՞ր է քէ ըսուածին նըման իրաւ' կը ննջէ:
Պատասխանն ասոր թիւ մըն է միայն, հարկ չըկայ խօսքի,
Թիւ մը պանծալի՛ ուր հարիւր հազար անգլիական ոսկի,
Որ ծախսուած է հայ ազգին համար, գործերու բարի,
Ինչ որ պատճառ է որ հայ ազգն ամբողջ անոր պինդ փարի:
Վանքներ ունիին մեծ հարբառութիւն նախ քան աղէտը,
Որ կորսուեցաւ, այլեւս չըկայ կըտակներուն հետը.
Խակ հայ անունով ինչ գանձ աւանդ որ Միութեան մօս էր՝
Կայ ու կը մնայ, անոնց մէջ կապտող ձեռքեր չեն մըտեր,
Ու պիտի մընան Միութեան մօս միշտ, այս իրական է,
ինչո՞ւ որ «ո՛չ գող մերձենայ եւ ոչ ցեց ապականէ»:
Հայոց Ընդհանուր Միութեան հանդէպ ոյս ունին շատեր,
Ամենին ընտիր գործերն իսկ անոր չեն զբնահատեր,
Կ'ուզին անտեսել որբանցներն ու դպրոցներն իրեն,
Յերիւրելով որ գեկավարները անփոյր կը նիրիեն:
Ո՛չ, ո՛վ սիրելի հայրենակիցներ, այդ ցաւ է փորի,
Բարեգործական ազգին լոկ բարիին ու շահ կը խորի,
Եւ ենք ուր հայուն ուսերուն ննշող դժբաղդ դէպքեր կան,
Միութիւնն արդէն կ'երկարէ շուտով ձեռքն եղբայրական:
Ամէն անկեղծ հայ որ ցեղին հանդէպ իրօֆ սէր ունի,
Անոր օգտակար ըլլալու որպէս ձեւ քող ընդունի՛
Անդամագրուիլ Բարեգործական Միութեան ցանկին,
Ուրտեղ ամէն հայ ազգին կ'ընծայէ օգնութիւն անգին:

Զէ՛ որ իր լուման այն հրսկայ Փօնտին մաս կազմէ պիտի,
Որ ազգին ջիղն է, դեղը՝ հիւանդի, սընունդն՝ աղքատի:
Ամէն ազգ կ'առնէ մեծամեծ տուրքեր ցեղակիցներէն,
Հայերն ալ երէ Միութեան իրենց փոքր լուման քերեն,
Վընարած կ'ըլլան տուրք մը մեր ազգին, եւ ո՛չ օտարին,
Օժանդակելով ազգափրութեան վեհ գաղափարին:
Ուստի ամէն հայ պէտք է Միութեան ջերմենանդ յարի,
Որ յաւերժանայ այս վըսեմ գործը Պօղոս Նուպարի,
Անկուտակցական իմաստուն հայուն՝ որ ազգին ի սէր
Եւ հայու օգտին՝ միշտ «Միութիւնն է զօրութիւն» կ'ըսէր...
Սրդ, յիշելով ա՛յս խորիին որ այլեւս օրերը հասան,
Հերիիք որ նատինք, ա՛լ տանիք մեր ազգին վէրքին բալասան,
Պինդ իրար փարինք, կապուած չըլլանք քոյլ կամ բարակ քելի,
Պողպատեայ կամքնին մարմին մը անպառակտելի...
Հերի՛ եղանք զոհ կուսակցական սին գաղափարներու,
Ա՛լ հատուածական ոյս, ատելութիւն վանենք մենք հեռու,
Դաշնակցական, Զօկ, Ռամկավար, Հնչակ եկած քով քովի՝
Նուիրութինք գործին, համակ հաւատելով, ուժով, կարովի,
Բարեգործական նիւդ մը հիմնենք հոս, փա՛ռք այս քաղաքին...

ԶԷԶՈՒՔ

Կուսակցական չեմ, այլ հայ՝ համաձայն պարոն Մաղաֆին...

ՏՐԴԱՏ

Մեր Վերաշինաց Միութեան կողմէ մատ կը հանենք վեր,
Կազմե՛նիք Միութեան մասնակիւղը շուտ, դարմանենք ցաւեր...

ԱՐԾԱԿ

Հիմք դընելու քուէն կը բերեմ Ռամկավարներուն,
Գովելով բարի աշխատանիներն այս Միութեան ներիուն:

ՆՈՒԽԻԿ

Հիմնե՛նիք, եւ ահա որպէս քղթակից ես «Զարկ» լրագրի՝
Խօսք կուտամ զբրել յօդուածաշարի մը զբրիչով արի,
Եւ Միութեան հետ հաշտեցնել անոնք որ կը մարտնչին...

ԿԱՅԾԱԿ

Բայց չի մոռնանք որ այդ կը կարօտի նիզի մը չնչին.
«Զարկ» օրաթերթն ալ իր ծախքը ունի. գիտէ՛, ի հարկէ,
Ուստի գանձիչը քող գայ գինին շուրջ ձեզ հետ սակարկէ...

ՄԻՒՍՍԿ

Կաշառուի՛ կ'ուզէ... ապականութիւնն ստորի՛ն արարք...

ՄԱՂԱՔ

Լընեցէ՛, խնդրեմ: Այստեղ յուզուելու չըկայ երբէ՛ հարկ,
Բարեգործական պէտք չունի բընաւ բաշխելու կաշառք,

Որ տըպագրուի իր գործին մասին մեծ յօդուաշարք.
Իր գործը արդէն լրջախոներուն կարկառուն փաստ է,
Եւ ազնիւ գործ մը արդէն կը խորշի բէֆլամէ, ազդէ:

ՄԻՍԱԿ

Արդէն յօդուածի պէտք չըլլայ պիտի: Գոցե՛նի այս էջը,
Քանզի մասնաճիւղն արդէն մեռնի պիտի՝ իր սաղմին մէջը,
Քանի որ շատեր պիտի փրնտըռեն ինձ պէս խոհական
Ուրիշ ձեւի մէջ գործելով փրնկել հայուն ապագան.
Օրինակ.— Ինչո՞ւ մեր մըտածումը չըլլայ առաջին
Օժանդակ ըլլալ Համազգայինին, Գրքութեան իշաչին...

ԱՐՇԱԿ

Հայրենակիցնե՛ր, Բարեգործական Միութեան մասին
Ումանց խըծքը ծընունին է միայն պատճառներու սին:
Սյու Միութիւնը խորհրդանիշն է Պօղոս Նուպարի,
Որ կեանքի իմաստ քննունած էր լոկ ըլլալը բարի,
Ըլլալ մարդասէր, խեղնին՝ բարեկամ, ցաւերու դարման,
Եւ այդ ուղղուք եամբ ըրած էր ազգին բարիք անսահման:
Զեմ ուղեր քուել այսուեղ մի առ մի գործերն ես իրեն,
Բայց հայերն եք իր յիշատակը յարգել կը սիրեն՝
Պէտք է որ դառնան իր հիմնարկութեան անդամ անխրտիր,
Հիմնարկութիւն մ'որ Նուպարի գրլուխ-գործոցն է ընտիր...
Կարմիր Խաչ չէ լոկ, ո՞չ ալ որբախնամ իր կազմն ու ներկան,
Այլ համազգային իր մէջ շա՞տ բարձր նրապատակներ կան:
Համերաշխութիւն կը տիրէ միայն իր դըրօշին տակ
Եւ եղբայրութեան սկզբունք միայն, ըրկա՛յ կիրք ու կագ...
Թէ անհրաժեշտ էր գոյութիւնն իր, շա՞տ ապացոյցներ կան,
Մեծ կաքողիկոս Հայոց Հայրիկն է այս բանին վըկան,
Եւ Տանն Կիլիկիոյ ծերունի Սահակ կաքողիկոսին:
Լունդակները որ անոր գովեստը բարձրէն կը խօսին:
Խոկ կաքողիկոս Խզմիրլեան եւս իր վառ օրհնէ՛քով
Միութեան դերին պերճախօս կերպով եղաւ ջատագով,
Նաեւ Պատրիարք մեծ գրագէտը՝ Դուրեան Եղիշէ՝
Այս մեծ Միութեան անունն ա՛յնքան խոր սիրով կը յիշէ:
Օտարներն անգամ հիացում յայտնած են այդ Միութեան,
Որուն հարուստներն իրենց դրամները վստահին միայն:
Արդ, ունենալով արժէ՛քն հաստատող այսքան մեծ փաստեր,
Բարեգործական Միութեան գործին ո՞վ չի նրպաստեր,
Ո՞վ կը վարանի միանալու եւ գործելու բարին,
Կամ ծառայելու ազգասիրական մեծ գաղափարին:

ԶԷՋՈՒՔ

Ամէն հայ կ'ուզէ անդամագրուիլ այս սուրբ սատարին,
Յաւերժացնել ազգաշէն գործը Պօղոս Նուպարին:

ՏԵՇԻՈՆԴ

Մեծամասնութիւնն համաձայն է որ Մասնաճիւղն իխմնենի:

ՈՐԲՈՒՆԻՒ

Ճշմարիտ հայեր Միութեան մասին չունին խոհեր նենգ:

ՄԱՂԱՔ

Քանի որ այսուեղ մեծամասնութեան ձայնը շահած ենի՛
Ուստի պահն է որ Վարչութիւն մ'ընտրել հիմա մըտածենի:

ՄԻՍԱԿ

Զէ, համաձայն չենի մեր ձեռնարկներուն դէմ մըցման անմահ:

ՀՆԱԶԱՆԴ

Մենի նախամեծար կը սեպենի այսօր մընալ ձկոնպահ:

ՏԵՇԻՈՆԴ

Յաւալի է որ սըխալ կարծիքներ եւ զրոյցներ սին
Արգելի կ'ըլլան ձեզ մեզի հետ այսուեղ գործել միասին.
Բայց մեծ յոյս ունինի որ ի սէր ազգին վաղը նաեւ դուք
Պիտի ըմբռնէ՛ք ազնիւ արժէ՛քն այս Միութեան յատուկ:

ԶՈՐԱՎԱՐ ՀԱՄԲԱԿ

(Կայծակին)

Կայծակ, հիմա ես ի՞նչ ընեմ, երբա՞մ քէ մընամ դեռ հոս...

ԿԱՅԾԾԱԿ

Կեցի՛ր, բայց կտրէ՛ բանալիկն յոյսդ, ազգայի՛ն հերոս...
Զե՞ս տեսներ, ամէնին ալ միաբերան ուժ կուտան գործին,
Այնպէս որ լաւ է միաստեղ քալել քան քէ առանձին:


ՏԵՇԻՈՆԴ

Արդ, ո՞վ զաւակներս, երբ դրուած են ա՛լ Միութեան հիմեր,
Նախապէս կ'օրինեմ աշխատանիներն ու այն ջանքերը մեր
Որ պիտի փրկեն դժբաղդուր ենէ մեր ազգին ներկան...

ԱՄԷՆՔԸ

Կեցցէ՛ յաւիտեան փառքը հայ ազգին՝ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ:

ՎԱՐԱԳՈՅՑ



Imprimerie du GLOBE
14. Rue du Frg. St. Denis
PARIS - X



26068

ԳԻՆ 5 ՏՐԱՎԵ

ՀՐԱՏԱՐԱԿԻՑ

V. MAKSOUDIAN

(Krikor-Vahan)

33, Rue des Ecoles, PARIS - V°